ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» սեպտեմբերի 2024թ. ՆՄՈ/452-Ա

ք. Արմավիր

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N37-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 13-րդ կետը, նույն հավելվածի 5-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված անվանակարգերում դիտարկվող ամսվա լավագույն ճանաչված հայտերի գնահատման նպատակով.

որոշում եմ՝

1. Ձևավորել մրցութային հայտերի գնահատման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ս. Բուդաղյան)՝
   1) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ հայտերի ներկայացված լինելու պարագայում՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 20-րդ օրը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N37-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով

հաստատված հավելվածով գնահատման չափանիշներին համապատասխան ընտրել յուրաքանչյուր անվանակարգում առավելագույնը 2 հայտ.

2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N37-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 5-րդ կետի 1-10-րդ անվանակարգերում ընտրված հայտերը ներկայացնել Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն, իսկ 11-13-րդ անվանակարգերում ընտրված հայտերը՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն:

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ հայտերի ներկայացված չլինելու պարագայում՝ եռօրյա ժամկետում հայտերի բացակայության մասին տեղեկատվություն ներկայացնել սույն կետի 2-րդ ենթակետով նշված կենտրոններ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Ա. Խաչատրյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2024-09-24 11:21:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024 թվականի սեպտեմբերի 24-ի
N ՄՈ/452-Ա որոշման

ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Բուդաղյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ.

Արձանագրող՝

Լ.Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ.

Անդամներ՝

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ.

Ն.Ալավերդյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ.

Լ. Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.09.2024 08:50:40 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023